

# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՍՐՎԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1947 թվի դեկտեմբերի 21-ին տեղի տևեց ազգական ՍՍՌ-ի շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Սովետների ընտրությունները:

Դեկտեմբերի 21-ը Համաժողովրդական  
տռնական օր Հանդիսացավ Հայաստանի  
աշխատավորության համար:

Հայաստանի աշխատավորությունը բնտ-  
րովիցների օրը դիմավորեց արտյոմաբե-  
րովիյան, գյուղատնտեսովիյան, գիտովիյան  
ու արվեստի բնագավառներուա ձեռք բերած  
մեծագույն նվաճումներով:

Փառավոր ու հոյակապ են այդ նվաճում-ները: Գործող ձեռնարկների շարքն էին անցել մի շարք նոր գործարաններ, ֆաբրիկաներ ու արտադրական ձեռնարկներ: Եթեքատվության բարձր ցուցանիշների էր հասել գյուղատնտեսությունը: Հայաստանի գրեթե բոլոր վայրերում վեհորեն վեր էին խոյացել հետպատերագմյան հնգամյակի, հոյակապ նորակառուցների երկնամբարձ աշտարակները, նորակառուցներ, որոնք վաղը էլ ավելի պիտի խթանեն Հայաստանի արդյունաբերության հարաձուն վերելքը: Այդ նորակառուցների մեջ ամենից առաջ աշքի և կարնում պղնձա-մոլիբդենային կոմբինատոր, որը Հայաստանում մոլիբդեն արտադրող առաջին ձեռնարկությունն է, հանդիսանալու (մոլիբդենն անհրաժեշտ է բարձրորակ պողպատի ստացման համար), ալլումինիտի խոշոր գործարանը, հրակայուն աղյուսի գործարանը, նուրբ մահուրդի մեծ գործարանը, որն արտադրելու է բարօրորակ բրդյագործածիներ—տրիկո, շեմլոտ, ինդիկո և այլն ու ուրիշ շատ նորակառուցներ:

Հայաստանի արդյունաբերության ու գյուղատնտեսության համար մնձ կարևորություն է ներկայացնում հիգրոէլեկտրակայանների շինարարությունը. Նոր հնգամյակի նորակառուցների շարքում կան երկու հիգրոկայաններ, որոնց լրիվ շահագործման հանձնվելուց հետո Հայաստանը 2,5-3 ան-

գամ ավելի էլեկտրական էներգիա կստանա, քան նա ստանում է այժմ։ Այսպիսի էներգետիկ բազայի առկայության պայմաններում հնարավոր կլինի ուսուուրկիկայի արդյունա, բերության արտադրանքը ավելացնել առնվազը երեք անգամ։ Բայց էլեկտրական էներգիայի առկայությունը ոչ միայն խթանելու է արդյունաբերության հորածուած վերելքը, արդյունաբերական նոր ճյուղերն առաջացումը, այլ և նա վճռելու է Արարատյան լայնածավալ դաշտի հազարավոր հեկտար անջրդի հողերի ըրառության հրատապ խնդիրները։

Ահա ալսպիսի փայլուն Հեռանկարներով  
ողբշնչված նոր հնգամյակի նորակառուցնե-  
րի շինարարները դեկտեմբերի 21-ին քվեա-  
տուպիերին մոտեցան:

Սակայն ոչ միայն նորակառուցցների և  
արդյունաբերական հին օջախն սրի աշխա-  
տավորները, այլև ուսապուլիկայի շրջաննե-  
րի աշխատավորները մեծագույն նվաճում-  
ներով դիմավորեցին դեկտեմբերի 21-ը։ Հա-  
յաստանի տասնյակ շրջաններից վեցոցներ  
թեկուզ թերթայի անվան և Հոկտեմբերյա-  
նի շրջանները։ Սովետական իշխանության  
տարիներին տնտեսական ու կուլտուրական  
վերելքի ուղիղով են ընթացել այս երկու  
շրջանները։ Մրանցից առաջինն ունի վեց  
արդյունաբերական ձեռնարկություն, դրանց  
թվում Տահումյանի անվան Մետաքսագործ-  
վածքային ֆաբրիկան, որն ընթացիկ տա-  
րում տվել է 600 հազար մետր մետաքսյա-  
գործվածքներ։ Թե շրջկենտրոնը և թե շրջ-  
անի գյուղերի մեծ մասը ունեն էլեկտրա-  
լուսավորություն, իսկ նոր հնդամյակի տա-  
րիներին շրջանի բոլոր գյուղերի կոլխոզների-  
ների բնակարաններում պայծառորեն կվառ-  
վեն էլեկտրալամպերը։ Երշանի բոլոր հիմ-  
նարկ ձեռնարկները և գյուղերը միշտանց  
հնես կապիւած են հեռախոսային ցանցով,  
գյուղերում գործում են ռագիոբարձրախոսու-

մել, իսկ շրջկենաբոնն սմի ռավիրհաղորդման հանգուց, Շրջանում գործում են 14 դպրոց, որոնցից 7-ը՝ միջնակարգ, 14 ակամք և 7 գրադարան: Շրջանն ունի հիմնավանց՝ 30 մահմակալով և ծննդատուն: Շրջանում գործում են շրջանային պետական թատրոնը, 7 կինոթատրոններ, մեկ շրջիկ կինոթատրոն և թատերական, ժողովրդիքների, երգի ու պարի 19 ինքնագործ խմբակներ: Այժմ անդրադառնանք Հոկտեմբերյանի շրջանին: Տարիներ առաջ այստեղ ձգվում էր Սարդարապատի ջրազուրի, օճառում ու անհրապույր անապատը: Սովորական մարդկանց հերոսական ջանքերի շնորհիլ Արաքսի ջրերը ցեմենտակուր ջրանցքներով հորդեցին դեպի Սարդարապատի անապատը և նա վերածվեց ծաղկուն բուրաստանի: Հազարավոր հեկտար տարածություններ ծածկվեցին ծառաստաններով, ոսկեողկույզ խաղողի, մեղրանուշ դեղձի, ծիրանի, կարմրաթուշ խնձորի և այլ պտուղների ժամունք այդինքով: Սարդարապատի ջրանցքի կառուցման վրա սովորական կառավարությունը ծախսել է? միինոն ոռութի: այդ հսկա ջրանցքի հիմնական ցանցը միայն կազմում է 550 կիլոմետր, ավելի քան 18 հազար հեկտար տարածություն ներկայում ծածկվել է բամբակի, խորդինու, կերարույսերի, բանջարեղենի ցանքերով և խաղողի ու պտղատու փարթամայքիներով: Նախկին անապատում ներկայում ծաղկում են վեց սովորողներով: Իրենց հիմնական բանվորական խոշոր սովորողներում կիրառվում է գյուղատնտեսական առաջավոր տեխնիկա, արգիների բուժումը կատարվում է ինքնաթիւններից արվող սրակումներով, իսկ գետնի վրա գործում են խոշոր «Վուլկան» մեքենաները, որոնցից յուրաքանչյուրը 100 մետր լայնությամբ բուժանութիւն անձրև է տեղում ծառերի վրա: Այստեղ աշխատանքները լրիվ մեքենայացված են, իսկ ծառերի խնամքը տարվում է ագրոտեխնիկայի վերջին խոսքով: Մի քանի տասնյակ գյուղատնտեսներ են աշխատում այս առաջավոր սովորողներում: Արագ թափով գարգանում է նաև շրջկենաբոն Հոկտեմբերյանը: Հայաստանի այս երիտասարդ քաղաքը, որ կրում է Մեծ Հոկտեմբերի անոնք, ընդամենը 15 տարվա պատմություն ունի: Այժմ Հոկտեմբերյանն ունի 800 շենք, որից 70-ը բազմահարի, ունի դպրոցներ, գրադարաններ, ակումբներ, թատրոն, կինոթատրոն, տպարան, լրագիր, ուղիուհանգուց, բուժարան, հիմնադասոց, ծննդատուն, ջրմուղ և այլ կուլտուր-կենցաղային սպասարկման հիմնարկ-ձեռնարկներ: Հոկտեմբերյանում հսկայական տարածու-

թյան վրա բարձրանում են Կոնսերվի խոշորագույն գործարանի կորպուսները: Այս գործարանի լիակատար կառուցումն ավարտվելու է նոր հնգամյակի վերջում, որի հետեւ բոված նրա արտադրական կարողությունն ու արտադրանքը կաճի բան անդամ: Հոկտեմբերյանի շրջանը համարվում է բամբակի, խորդինու, խաղողի և բազմատեսակ ընտիր մրգերի արտադրության շրջան: Բացի բամբակազտից գործարանից, Հոկտեմբերյանի շրջանում գործում են գինու գործարաններ: Նոր հնգամյական կայան: Շրջանում գործում են 10 միջնակարգ, 19 ուլուի միջնակարգ և 7 տարրական դպրոց ու մեկ դյուլատնտեսական տեխնիկում: Հըրշանի 373 ուսուցիչներից 80-ը ունեն բարձրագույն և թերթի բարձրագույն կրթություն, իսկ մնացածները միջնակարգ մանկավարժական կրթություն: Շրջանում գործում են 36 ակումբ՝ իրենց զրագարան-ընթերցարաններով, հինգ ստացիոնար և մեկ շրջիկ կինոթատրոն, մեկ պետական թատրոն, 7 տրոպկայան, մեկ բուժարան՝ իր վիրաբուժական, ակնաբուժական, թերապեվտիկ և այլ բաժիններով, ու երկու մանկական հիմնադասոց: Շրջանում աշխատում են 26 բժիշկ և միջին բժշկական մանձնակազմի 72 աշխատողներ: Հոկտեմբերյանում լույս է տեսնում նաև իր շրջանային թերթը:

Այսպիսի և ավելի հոյակապ պատկեր ունեն նաև ռեսպոնսիվականի մի քանի տամանյակի հասնող մյուս շրջանները:

Անձանաշելիորեն փոխվել է և հայ գյուղի պատկերը, անցյալի հայ գրականությունից ծանոթ հայ գյուղը գոյություն չունի այնու: Հսկայաբայլ առաջ է ընթացել նա գիտության ու կուլտուրայի լուսապայծառ ուղիով: Ահա ձեզ օրինակ Աշտարակի շրջանի Ոսկեպագ գյուղը, ներկայում այս գյուղում աշխատում են բարձրագույն կրթություն ունեցող մոտ քառասուն մարդ— ուսուցիչներ, բժիշկներ, գյուղատնտեսներ, անասնաբուժներ, ինժեներներ: Այս գյուղում միայն 25 ուսուցիչ է աշխատում: Կոլխազի բոլոր բրիգադիրներն ու օղակավարները անխսիր միջնակարգ կրթություն ունեն: Գյուղում արդեն չորրորդ տարին է, ինչ գործում է գիշերային միջնակարգ դպրոց, ուր ներկայումս սովորում են 70 կոլխոզնիկներ: Գյուղացիներն իրենց առաջ խնդիր են դրել, որպեսզի յարաքանչյուր շափառաս քաղաքի պարտադիր կերպով միջնակարգ կրթություն ունենա: Գյուղում մի քանի անդրադամ մարդ կա միայն, դրանք էլ հայրենիք վերադարձ մեր եղբայրներն ու քույրերն

են, որոնք օտար «կովտուրական» երկրներում զրկված են եղել իրենց անդրագիտությունը վիրացներու հարավորությունից: Ներկայում հայրենապարձները արտգորեն վիրացնում են իրենց անդրագիտությունը՝ նրանց համար կազմակերպված անդրագիտության վերացման հատուկ խմբակներում: Հայ կինը սննդյախ գյուղում իրավազուրկ ու անդրագետ է եղել, սակայն փոխվել է այժմ պատկերը, նա ոչ միայն իրավազուրկ ու անդրագետ չէ, այլև ակտիվորեն մասնակցում է հասարակական կյանքին: Բացի նըրանից, որ Ոսկեվազի բարձրագույն կրթություն ունեցող ինտելեկտներից մի մասը կանաչը են կազմում, այստեղ թե գյուղուվետի նախագահն է կին, և թե կոլլուզի նախագահը: Անցել է անդրած այն ժամանակը, երբ հայ գրողը գաճառավում էր, որ «Ճրագով հայ գրքին, հայ մուշտարի շես ճարի»: Գյուղում մեծ է գրականության պահանջը, սուպարաֆա գրքերը արագորեն ձեռքից ձեռք են անցնում: Ոսկեվազը ցանկություն է հայտնում գյուղում գրախանություն բաց անելու Այստեղ մենք կանգ շառանք այս գյուղի գյուղատնտեսության մեջնայացման, ագրոտեխնիկայի կիրառման, կուտուր-լուսավորական հիմնարկների աշխատանքի, գյուղի բարեշեն ու բարեկարգ վիճակի, կոլխոզնիկների կուտուրական նիստ ու կացի և կոլխոզային լիառատ, ունեոր կյանքի իրնդիրների վրա:

Սակայն Ոսկեվազը երջանիկ բացառություն չի կազմում, նա ուսապուրիկայի նմանատիպ գյուղերից մեկն է հանդիսանաւմ:

Դեկտեմբերի 21-ը անհուն բերկրությամբ ու խանդավառությամբ դիմավորեցին նաև անցյալ ու այս տարում հայրենիք ժամանած մեր հայրենադարձ եղբայրներն ու քույրերը: Այս տարի ժամանածները առաջին անգամ բախտ ունեցան, որպես սովետական հայրականացիներ, հայրենի հողի վրա մասնակցելու տեղական Սովետների ընտրություններին: Նրանցից շատ շատերը, որոնք օտար ու անհարաժառ երկնակամարի տակ իրավագուրկ ապահովագրացու վիճակում դեգերել են տարիներ շարունակ, այսօր իրենց հայրենիքում արժանացել են աշխատավորների տեղական Սովետների գեպուտատ ընտրվելու բարձր պատվին: Միայն երեսն քաղաքում դեպուտատ են ընտրվել 35 հայրենադարձ, դրանց թվում պրոֆեսոր-դոկտոր Մկրտիչ Տեր-Կարապետյանը, Հրանտ Դեմիքյանը, Ժիրայր Միմոնյանը, Հակոբ Բարսեղյանը, Վահան Դագիսյանը, Ազատ Աղամյանը, Մելին Մանուչյանը, Հովհաննես Ղովասյանը և ուրիշներ: Լենինականում դեպուտատ են ընտրվել 20 հայրենադարձ: Հայրուրավոր

հայրենադարձներ էլ տեղական Սովետների գեպուտատ են ընտրվել Հայաստանի շրջակներում, քաղաքներում ու գյուղներում: Այս ինչ են գրու տեղական Սովետների գեպուտատության թեկնածու առաջարկած հայրենադարձները.

«Ես այն հայերից մեկն եմ, — գրում է հայրենադարձ թժիշկ Գառնիկ Օհանյանը, — որոնք երջանիկ պատահականությամբ փըրկվեցին կոտորածներից և սկսեցին բախտ որոնել կապիտալի աշխարհում:»

Երկար թափառումներից հետո ես հաստատվեցի Հունաստանում: 27 տարվա ընթացքում 3 անգամ, աշխատավորների կամքով, ես առաջադրվեցի պետական պաշտոնի, բայց 3 անգամն էլ հունական կառավարությունը մերժեց աշխատավորների պահանջը, որովհետեւ ես էլ աշխատավոր էի, հայ աշխատավոր, խորթ ու օտարական:

Ինչպես աշխարհով մեկ ցրված հայերը, ամապես էլ ես այդ անարգանիքով ու նախատինքից ազատվելու միակ հույսը կապում էի իմ հայրենի երկրի՝ Սովետական Հայաստանի հետ: Ստարության մեջ գտնվող հայրենիկ անդրագործ կամքով Սովետական պետության ընդունած որոշումը հայերի ներգաղթ կազմակերպելու մասին:

Իմ հույսերը իրականացած են, Վերադառնալով հայրենիք, անմիջապես անցա աշխատանիքի մինձ վկրեցին գործությունը: Մերժության մեջ Ստալինը կամքով Սովետական պետության ընդունած որոշումը հայերի ներգաղթ կազմակերպելու մասին:

Սովետական Հայաստանում ես տեսա ավելին, քան սպասում էի. ստացա ավելի զգայուն վերաբերմունք, ավելի շատ վստահություն, քան կարելի էր հուսալ, ես ընդամենը մի քանի ամիս է, որ հայրենիքում եմ, և այդ կարճ ժամանակամիջոցում Ալավերդի քաղաքի աշխատավորները արժանվուն կերպով զնահատեցին իմ աշխատանիքը: Կինձ առաջադրեցին Քաղաքային Սովետի գեպուտատության թեկնածու: Ես, որ օտարության մեջ իրավազուրկ էի, արհամարհված, այժմ պետք է մասնակցեմ քաղաքի կառավարմանը: Սրանից մեծ պատիվ ես չեմ տեսել իմ կյանքում: Եվ դա պարտավորեցնում է ինձ աշխատել ազնվորեն, արդարացնել ժողովրդի վստահությունը»:

Վերա Ղամբարյանը գրում է: «Թուրքիայից փախչելով մեր ընտանիքը ընակություն էր հաստատել իրանի Թավրիզ քաղաքում: Այստեղ հայրա աշխատելով կալվածատիրոջ հողում, չեր կարողանում կերակրել ընտանիքը, կարիքն ու զրկանքը միշտ անբաժան էին մեզնից:»

Ես, որ 1919 թվի ծնված եմ, մինչև 1946 թվի օգոստոս ամիսը աշխատանք չեմ գտել

իրանում: Երբ վերադարձա իրանից և ընակություն հաստատեցի Ղափան քաղաքում, ինձ օգնեցին մասնագիտություն սովորել, իսկ այնուհետև նշանակվեցի Ղափանի շըլջպետանկի Հսկիչ— Հաշվապահ: Աշխատում են նաև հայրս, մայրս և քույրս:

Մեր սեփական աշխատանքով մենք այժմ՝ ապրում ենք առանց կարիքի և օգտվում Ստալինյան Կոնստիտուցիայով սովետական քաղաքացիներին տրված բոլոր իրավունքներից:

Միայն իմ հարազատ հայրենիքում՝ Սովետական երկրում ստացա քաղաքացիական իրավունքներ և այժմ ես ոչ միայն կարող եմ ընտրել, այլ կարող եմ նաև ընտրվել, որպես լիրավ քաղաքացի:

Ղափանի Զանգեզուրի Հանքվարդության Շահումյանի անվան Հանքերի բանվորները, ինժեներա-տեխնիկական աշխատողները, ինչպես նաև Շրջութեատի գործկոմի ֆինբաժնի, Պետրանկի և ինայդրամարկղի աշխատողների կոլեկտիվները ինձ առաջադրեցին աշխատավորների ղեպւտատների Ղափանի Քաղաքացին Սովետի ղեպւտատության թեկնածու:

Նախկին իրավագործ կնոջ համար դա ամենամեծ իրավունքն է, աշխատավոր մարդու համար պատիվ ու հարգանք, որը կարող է լինել միայն Սովետների երկրում, Ստալինյան Կոնստիտուցիայի վառ արևի տակ, ես դժվարանում եմ բառեր գտնել արտահայտելու իմ սերն ու համակրանքը իմ ջերմորեն սիրելի հայրենիքի, մեր ազատարար հայր Ստալինի նկատմամբ: Ես ոչ մի չանը չեմ խնայի դեպի ինձ ցուցաբերվող վստահությունն արդարացնելու համար»:

Իսկ Արտաշատի շրջանի Դարզալու գյուղի հայրենադարձ կոլխոզնիկ Նարիման Միխայյանը հետեւալն է գրում.—«Երկար տարիներ թափառելով օտարության մեջ, ես չգտա արդարություն, ազատություն և օրիա չոր հաց, միշտ օտար էի, իրավագործի: Միայն Սովետական կառավարության և անձամբ ընկեր Ստալինի հայրական հոգատարության շնորհիլ վերադարձա սովետական Հայրենիք, որտեղ ինձ համար ստեղծվեցին ունենություն ու երջանիկ կյանքի բոլոր պայմանները:

Հայրենիք վերադառնալու առաջին իսկ օրվանից ես մտա կոլխոզ և սկսեցի աշխատել ինչքան որ ուժ ու եռանդ ունեմ, խորապես գիտակցելով, որ աշխատում եմ ի՞նձ համար, իմ Հայրենիքի ե'լ ավելի հզորացման ու բարգավաճման համար: Այս տարի իմ ընտանիքով վաստակեցի հազար աշխար:

Որի գիմաց արդեն ստացել եմ 1.500 կիլոգրամ հացատիկ, 2.500 կիլոգրամ խաղող, 700 կիլոգրամ չամիչ, 500 կիլոգրամ փշատ, 2 տոննա վառելանյութ, 25.000 ուռելի կանխիկ դրամ, մեծ գանակությամբ յուղ, պանիր, մեղր և այլն: Սա սովորական առատությունն է: Դրա լավագույն ապացույցը պարտիայի ու կառավարության պատմական ուրոշումն է: Այն պահին, երբ կապիտալիստական երկրներում կրծատվում է աշխատավորների օրապահիկը, մեր երկրում վերացվում է քարտային սիստեմը: Նյութական ապահովության հետ միասին այստեղ, իմ հայրենիքում ես դարձա սովետական իրավահամար քաղաքացի, և օգտվում եմ Ստալինյան Կոնստիտուցիայով տրված բոլոր իրավունքներից: Մեր գյուղի աշխատավորներն իրենց նախընտրական ժողովում ինձ առաջադրեցին գյուղական Սովետի ղեպւտատության թեկնածու ես նոսք եմ տալիս արդարացների իմ ընտրուների վստահությունը և ծառայել նրանց շահերի համար:

Ծնորհակալություն հայր Ստալինին, որինձ և ինձ նման հազարամբոր պանդուխտներին շնորհեց հայրենիք, ազատ ու երջանիկ կյանքը:

Երբ Արևիկի ու Այգաբացի կոլխոզնիկները իրենց նախընտրական ժողովում թորողով Գալստյանին առաջադրեցին Ախուրյանի Շրջանային Սովետի ղեպւտատության թեկնածու, ապա հայրենադարձ դարբինը, որը Հայրենիք էր վերադարձել 1946 թվին Հունաստանից, հայտարարեց. «Դուք ինձմեն համաձայնություն կուգեք, խնդրեմ, ես համաձայն եմ: Ես կանեմ այն ամենը, որոնցով օգտակար կրնամ ըլլալ իմ հայրենիքիս, իմ երկրիս, իմ սովետական Արևիկիս»:

Այսպիսի շատ օրինակներ կարելի է բերել, որոնք ցուց են տալիս հայրենիքում հայրենադարձների նկատմամբ ցուցաբերվող անսահման հոգատարությունը, գորգուրանքը: Անհուն է հայրենադարձների երշանկությունը՝ հայրենիքում վայելած արտոնությունների, երշանիկ կյանքի կերտման հնարագորությունների ստեղծման համար: Նորանք իրենց խորը երախտագիտական զգացմունքները արտահայտելու համար ոժվարանում են բառեր գտնել: Եվ իրավացի է եղիպատուից վերջերս հայրենիք վերադարձած Հակոբ Արամյանը, որը գրում է:—

«Այնքան հորդառատ է մեր երջանկությունը, այնքան անշափ, որ մեղանից շատաշատերը գեռ չեն կարողանում լրիվ հասկանալ և ըմբռնել այն: Անհրաժեշտ է որոշ

ժամանակ, որպեսզի կարողանանք վարժվել  
մեր երջանկությանը»:

### Դեկտեմբերի 21 էր:

Լույսը դեռ չէր բացվել, բայց Հայաստանի քաղաքներում, ավաններում ու գյուղերում արտասովոր եռուցեն էր տիրում. մարդիկ խումբ-խումբ զեպի ընտրական տեղաժամանեն էին շտապում: Ամեն մեկն աշխատում էր առաջինը ինքը քվեատուփի մեջ իջեցրած լինել ընտրական թերթիկը: Սովետական երշանիկ մարդկանց խմբերը ընտրական տեղամաս էին գալիս երածշտության ախորժակար հարցուր հնչյունների տակ: Ընտրական տեղամասերում հավաքված ընտրողները մինչև քվեարկության սկսվելը երգում, նվագում ու պարում էին, ամենուրեք զիլ հնչում էր երշանիկ ընտրողների առուց ու զվարթ ծիծաղը: Զափազանց շատ ընտրողներ էին հավաքվել մանավանդ՝ այն տեղամասերում, ուր քվեարկությունը էին բոլոր կիկների պարտիայի ու սովետական կառավարության առաջնորդներն ու ղեկավարները՝ հայ ժողովրդի մեծագույն բարեկամ ու ազատարար ի. Վ. Ստալինը, հայ ժողովրդի հավատարիմ զավակ Ա. Ի. Միկոյանը, հայ ժողովրդի լավագույն բարեկամներ Վ. Մ. Սոլոտովը, Լ. Պ. Բերիան, Հայաստանի Կոմունիստական Պարտիայի ղեկավար Գր. Հարությունյանը, ՀՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության նախագահ Մ. Պապյանը և ուրիշներ: Առաջնը քվեարկելու բուռն ցանկությամբ նրանք բոլորն էլ անհամբեր սպասում էին քվեար կության սկզբին:

### Ժամը 6 է:

Ընտրողները, երշանկության ժպիտը դեմքներին և հապատ սովետական քաղաքացու կոշմամբ, մոտենում են քվեատուփերին. այդ պահին Հայաստանի բոլոր վայրերում միաժամանակ ընտրական տուփերի մեջ են իշեցվում առաջին ընտրական թերթիկները:

Քվեարկությունը սկսված էր. Հայաստանի քաղաքներում, ավաններում, գյուղերում շարան-շարան քվեատուփերին էին մոտենում արդյունաբերության ու գյուղատնտեսության առաջավորները, պարտիայի ու կառավարության ղեկավար աշխատողները, նորակառուցների շինարարները, տրանսպորտի աշխատողները, գիտության ու արվետի ականավոր ներկայացուցիչները, ուսանող երիտասարդությունը, հայրենիք վերադարձած հայերը, հոգևոր հայրերը... Քվեատուփերին էին մոտենում ընտրության հասակը բոլորած երիտասարդները և սովետական կարգերում երիտասարդացած ծերերը, երևանի քաղաքմերձ Կիրզա ավանի ընտրական:

Մեղամասն էր եկել մի քանի ամիս առաջ Սիրիայից վերադարձած 100-ամյա Հովհաննես թագավանը իր ընտանիքի յոթ անդամների՝ կնոջ, տղաների, աղջիկների ու հարսների հետ: Կիրովականում առաջինը քվեատուփին էր մոտեցել հայրենադարձ, 94 տարեկան հանում թարուրյանը, Զանգիբրասարում քվեարկելու առաջնությունը տրվել է 120-ամյա կոլխոզնիկ Արաս Զումշուղովին, Ղուկասյանի շոջանի Սարագուլում առաջարկության ժամանական թարագուլարի շրջանի Աղիզգյանդ գյուղում լապտերը ձեռքին ընտրական տեղամաս էր եկել 99-ամյա Ներսես Մանուկյանը, Ղարաբաղլարի շրջանի Աղիզգյանդ գյուղում լապտերը ձեռքին ընտրական տեղամաս էր եկել 132 տարեկան Ալավերդի Արուշովը, որն առաջինը քվեատուփի մեջ իշեցրեց ընտրական թերթիկը գոչելով. «Կեցցե՞ միծ Ստալինը լուսնը ու առ մեզ համար երջանիկ ու ուրախ կյանք է ստեղծելու Ալավերդում քուրդ կոլխոզնիկուհի Շաքե Կոկլյանը առաջինը մոտենալով քվեատուփին ասաց. «Աշխարհում կա մոտ 7 միլիոն քուրդ: Ներանք ոչ միայն չունեն ձախի իրավունք, զիր ու գրականություն, այլև գաղանաբար շահագործվում են օտարերկրյա կեղեքիների և քուրդ բեկերի կողմից: Մեր լեռնային շրջանը մի փարոս է ամրող աշխարհի քրերի համար: Խոկ Ամերիկայից վերցերս հայրենիք վերադարձած թժիշկ Մ. Բնակունիճ գրում է.»

«1947 թվականի դեկտեմբերի 21-ը, որ աշնանային պայծառ, արևով օծված մի գեղցիկ օր էր, իմ վախունամյա կյանքի ամենանուշ և հիշատակարժան օրերի մեջ կմնա հավետ:

Կյանքիս մեջ առաջին անգամ, որպես սովետական ազատ ու երջանիկ քաղաքացի, հայրենի առօր հողի վրա ընտրություններին մասնակցեցի այնպիսի եղուայրական զերմ և անկեղծ մթնոլորտում, որի նմանը երբեք չեմ տեսել օտարերկրյա քաղաքացիության իմ ամրող կյանքում:

Արտասահմանյան ուսակցիոն թերթերում հաճախ կարդում էինք Սովետական Միության կարծեցալ երկաթյա վարագույրի առասպելի մասին: Այսօր մեր սեփական աշքերով տեսնում ենք, որ այդ երկաթյա վարագույրը գոյություն ունի թի Սովետական Միությունում, այլ արևատյան այսպես կոչված ղեկուրատական երկրներում:

Սովետական իմ Հայրենիքում ես ապրում էի ընդամենը երեք շաբաթ և որպես սովետական լիբրավ քաղաքացի մասնակցեցի տեղական Սովետների ընտրություններին:

Խսկական ճշմարիտ դեմոկրատիան այս-  
տեղ է, սովետական երկրում, որի քաղաքա-  
ցին եմ այժմ»:

Դեկտեմբերի 26-ին Հրապարակվեց Հայ-  
կական ՍՍՌ Գերագույն Սովետի նախադա-

կոմունիստների և անպարտիականների բլո-  
կի. թեկնածուների օգտին ձայն էր տվել  
քվեարկությանը մասնակցած ընտրունների  
99,62 տոկոսը:

Տեղական բոլոր Սովետներում ընդամենը



Հայրենակարձ Արշակ Սալարյանի ընտանիքը նվերկելուց հետո դուրս է զայխ ընտրական տեղամասից: Չախից աջ՝ Ա. Սալ արյանի որդի՝ Կարապետը, դուստրը՝ Վե-  
ժումին, միջնեկ որդի՝ Նուպարը, կինը՝ Հայկո մին, ինքը՝ Արշակ Սալարյանը, կրտսեր  
որդի՝ Զավենը, հարսը՝ Անժելլ և ավագ որդի՝ Մմբատը՝ իր փոքրիկ Պետիկին զրկած:

Հության հաղորդագրությունը, ՀՍՍՌ աշխա-  
տավորների դեպուտատների շրջանային,  
քաղաքային, գյուղական և ավանային Սո-  
վետների ընտրությունների արդյունքների  
մասին: Քվեարկությանը մասնակցել էին  
ցուցակագրված ընտրողների 99,99 տոկոսը:

ընտրվել են 12.195 մարդ: Ընտրված դեպու-  
տատների թվում կան 4.118 կին, որ կազ-  
մում է 33,77 տոկոսը, կոմպարտիայի ան-  
դամներ և թեկնածուներ 6.411 մարդ, որ  
կազմում է 52,57 տոկոսը և 5.784 անպար-  
տիական, որ կազմում է 47,43 տոկոսը:

Վ.

